ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/58

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մեր Անանյանս, քննելով «Արմենֆարմ» ՍՊԸ-ի կողմից 23.04.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/58 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Արմենֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արմենֆարմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 23.04.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Նաիրիի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 7 հավելվածին՝ պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով (այսուհետ նաև՝ Տեխնիկական բնութագիր) սահմանվել է հետևյալը.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը
3	33691160/3	Ախտահանիչ խտանյութ՝ նախատեսված բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանման, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար	Բաղադրությունը- ՉԱՄ, Գուանիդինի ածանցյալներ (Գուանիդինի- ի ածանցյալներ՝ ոչ ավելի, քան 1%), ավել ֆերմենտային կոմպլեքս՝ ոչ պակաս քան 3 էնզիմի պարունակությամբ (լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա), մակերևույթային ակտիվ նյութեր՝ ՄԱՆ-եր, ինչպես նաև գործառնական բաղադրիչներ և այլ հավելյալ նյութեր.: Ներկայացվող ապրանքը պետք է պարունակի նաև կոռոզիայի ինհիբիտորներ (կազմի մեջ կոռոզիոն ինհիբիտորի առկայությունը պետք է հաստատվի օգտագործման հրահանգով): Առաջարկվող ախտահանիչ նյութը իր բաղադրությունում չպետք է պարունակի որպես ակտիվ բաղադրիչներ քլոր, ալկոհոլ: Փաթեթավորումը- 1լիտր կամ այլ ծավալի պոլիէթիլենային տարա համապատասխան չափիչ բաժակով: 1լիտր խտանյութից պատրաստվի մինչև 0,5%-անոց, ոչ պակաս , քան 200 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ ՝գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), հակավիրուսային (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), A գրիպի H5N1, H1N1տեսակները) և հակասնկային (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) ազդեցությունը մինչև 15 րոպեում (ինչը հաստատված լինի << Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով): Աշխատանքային լուծույթի պատրաստման համար պահանջվող ջերմաստիճանը պետք է լինի՝ ոչ պակաս քան 15C-ից մինչև ոչ ավել քան 25C-ը: Աշխատանքային լուծույթի պիտանելիությունը լինի 5 օր-ից ոչ պակաս, նախատեսված բազմակի օգտագործման համար: Մատակարարման պահին խտանյութի ժամկետի 1/2-ի առկայություն Ախտահանիչ նյութի pH - 5,0 -8,0: Վերջնական օգտագործման համար ստացվող ախտահանիչ նյութի աշխատանքային լուծույթի արժեքը ստանալու համար, հաշվարկները կատարվելու են համաձայն << Առողջապահության նախարարության կողմից հաստատված համապատասխան մեթոդական հրահանգների և <<-ում գործող սանիտարական նորմերի՝ հիմք ընդունելով հակաբակտերիալ (ներառյալ տուբերկուլյոզը), հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները: Վտանգավորության աստիճանը- 4-րդ, 5-րդ դաս: Ունենա որակի հավաստագիր, << ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների 3-րդ չափաբաժնի համար հայտ են ներկայացրել «Արմենֆարմ» ՍՊԸ-ն և «Խաչպար» ՍՊԸ-ն:

«Խաչպար» ՍՊԸ-ն թիվ 5 հավելվածով՝ գնային առաջարկով որպես ապրանքի անվանում նշել է. «Ախտահանիչ խտանյութ՝ նախատեսված բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանման, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար, համարժեք՝ (Մեգաբակ խտանյութ 1լ): Խտանյութի պահպանման ժամկետը 5 տարի է: 1 լիտր խտությունից ստացվում է 0.5 % 200 լիտր աշխատանքային պատրաստի լուծույթ, որը պիտանի է 41 օր: Նախատեսված է բազմակի օգտագործման համար և այլն: Ունի ԵՏՄ սերտիֆիկատ և ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ՝ համաձայն՝ 2016թ. հունիսի 10-ի թիվ 1794-Ա»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.04.2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, իսկ «Արմենֆարմ» ՍՊԸ-ն՝ 2-րդ տեղ:

www.gnumner.am կայքում 2018թ. ապրիլի 17-ին հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշման համաձայն՝ Հանձնաժողովի 17.04.2018թ. թիվ 2 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, որի համաձայն ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխան, ինչով պայմանավորված ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 13-րդ հոդվածի համաձայն.

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2016թ. հունիսի 10-ի թիվ 1974-Ա «Մեգաբակ» ախտահանիչ միջոցների կիրառման մեթոդական հրահանգը հաստատելու մասին հրամանով հաստատվել է «Մեգաբակ» ախտահանիչ միջոցի կիրառման մեթոդական հրահանգը՝ համաձայն հավելվածի:

Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

«Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի թիվ 7 հավելվածին՝ պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով 3-րդ չափաբաժնի համար նախատեսվել է ձեռքբերել ախտահանիչ խտանյութ՝ նախատեսված

բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանման, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար:

«Խաչպար» ՍՊԸ-ն, թիվ 5 հավելվածով՝ գնային առաջարկով 3-րդ չափաբաժնի համար առաջարկել է համարժեք ապրանք՝ «Մեգաբակ խտանյութ, 1լ», ինչը հաստատված է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2016թ. հունիսի 10-ի թիվ 1974-Ա հրամանով:

Ստորև ներկայացվում է՝ «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերի և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ «Մեգաբակ խտանյութ, 1լ» ապրանքի տեխնիկական բնութագրերի միջև առկա տարբերությունները.

	«ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիր	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՄԱՆ «10» հունիս 2016թ. No 1794 – Ա «ՄԵԳԱԲԱԿ» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ	Եզրակացություն
	Բաղադրությունը	Որպես ազդող նյութ, միջոցը պարունակում է	
1.	ՉԱՄ	(ՉԱՄ)-Չորորդային ամոնիումի միացություններ-դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ (7,5±0,5%),	Համապատասխանում է
2.	-	**Երրորդային ամին** – Ն,Ն-բիս (3-ամինոպրոպիլ) դոդեցիլամին (5,0±0,5%),	**Չի համապատասխանում**
3.	Գուանիդինի ածանցյալներ (Գուանիդինի- ի ածանցյալներ՝ **ոչ ավելի, քան 1%)**	պոլիհեքսամեթիլենբիգուանիդ հիդրոքլորիդ **(2,5±0,5%),**	**Չի համապատասխանում**
4.	**Ֆերմենտային կոմպլեքս՝ ոչ պակաս քան 3 էնզիմի պարունակությամբ (լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա),**	-	**Չի համապատասխանում**
5.	**1լիտր** խտանյութից պատրաստվի **մինչև 0,5%-անոց**. **ոչ պակաս , քան 200 լիտր** աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ՝գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի	**<< Մեթոդական հրահանգ Աղյուսակ 18** **1լիտր** խտանյութից պատրաստվում է **3%-անոց,** **33,33 լիտր** աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ՝գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները),	**Չի համապատասխանում**

	միկոբակտերիաները), հակավիրուսային (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), A գրիպի H5N1, H1N1տեսակները) և հակասնկային (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) , **<u>ազդեցությունը մինչև 15 րոպեում</u>** (ինչը հաստատված լինի << Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով):	հակավիրուսային (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), A գրիպի H5N1, H1N1տեսակները) և հակասնկային (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) **<u>ազդեցությունը 60 րոպեում</u>** (համաձայն << Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգի):	
6.	**<u>Ախտահանիչ նյութի pH - 5,0 -8,0:</u>**	**<u>Ph ը՝ 10,5±1,5 միավոր:</u>**	**Չի համապատասխանում**
7.	Աշխատանքային լուծույթի պատրաստման համար պահանջվող ջերմաստիճանը պետք է լինի՝ **<u>ոչ պակաս քան 15C-ից մինչև ոչ ավել քան 25C-ը:</u>**	**Աղյուսակ 18** **Ախտահանիչ միջոցի լուծույթով բժշկական նշանակության իրերի ախտահանման ռեժիմներ տուբերկուլոզի ժամանակ** **<u>Աշխատանքային լուծույթի նախնական ջերմաստիճանը (42±2)</u>** ախտահանման պահաժամի ընթացքում չի ապահովվում:	**Չի համապատասխանում**

Վերը նշված համեմատական աղյուսակի ուսումնասիրությունից ակնհայտ երևում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրերը ակնհայտ տարբերվում են և չեն համապատասխանում գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերին, այն է՝ ընկերության կողմից ներկայացված ապրանքի՝ մեթոդական հրահանգը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2016թ. հունիսի 10-ի թիվ 1974-Ա հրամանով նախատեսված «Մեգաբակ» ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգով նախատեսված հավելվածից, այսինքն «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված ապրանքը ուղղակի չի կարող համարժեք լինել Ընթացակարգի հրավերի թիվ 3 հավելվածով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին:

Բացի այդ, «Արմենֆարմ» ՍՊԸ-ի կարծիքով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը գնահատելիս Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է առաջնորդվեր Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված պահանջներով և մերժեր վերջինիս հայտը, քանի որ «Խաչպար» ՍՊԸ-ն թիվ 5 հավելվածում՝ գնային առաջարկում որպես ապրանքի

անվանում նշել է Ընթացակարգի հրավերի թիվ 6.1 հավելվածով նախատեսված՝ իր կողմից 1-ին տեղ զբաղեցված մասնակից ճանաչվելու պարագայում ներկայացվելիք համարժեք ապրանքատեսակը և դրա տեխնիկական բնութագրերը, ինչի պարագայում գտնում ենք, որ մասնակցի գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, իսկ Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջների համաձայն՝ գնային առաջարկը ենթակա չէ շտկման:

Վերոնշյալով պայմանավորված՝ Ընկերությունը գտնում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից սխալ գնային առաջարկ ներկայացված լինելու հանգամանքով պայմանավորված, ինչպես նաև ընկերության ապրանքը Ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2016թ. հունիսի 10-ի թիվ 1974-Ա հրամանով նախատեսված «Մեգաբակ» ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգով նախատեսված հավելվածին չհամապատասխանելու հիմքով՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը և համապատասխանաբար նաև հայտը ենթակա էր մերժման Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից:

«Արմենֆարմ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1) Դադարեցնել հանձնաժողովի՝ 10.04.2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 5-րդ կետով՝ «Խաչպար» ՍՊԸ-ին Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը,

2) Դադարեցնել հանձնաժողովի 17.04.2018թ. թիվ 2 որոշմամբ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,

3) Դադարեցնել 2018թ. ապրիլի 17-ին կայացված և www.gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ 3-րդ չափաբաժնի մասով:

«Արմենֆարմ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.04.2018թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր

ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. **«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.**

«Խաչպար» ՍՊԸ-ն 26.04.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված միջնորդությամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 26.04.2018թ. միջանկյալ որոշմամբ ԳԲԽ-ԱՄ-2018/58 բողոքով ներգրավվել է երրորդ կողմ:

«Խաչպար» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը, ապահովելով իր մասնակցությունը բողոքի քննության նպատակով 26.04.2018թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստին, հայտնել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված խտանյութի տեխնիկական հատկանիշները թեև տարբերվում են Ընթացակարգի հրավերի թիվ 3-րդ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրից, սակայն համարժեք են, քանի որ ազդող նյութերը նույնն են, որը հաստատվում է նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված մասնագիտական եզրակացությամբ:

3. «Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

«Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.04.2018թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ,

ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնով ներկայացված խտանյութի թվերը, տոկոսները և որոշ պարամետրեր տարբերվում են Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրից, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը գնահատելիս հիմք է ընդունել ՀՀ առողջապահության նախարարության կողմից 07.11.2016թ. տրված մասնագիտական եզրակացությունը և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված խտանյութը համարել է որպես համարժեք:

4. ԳԲԽ-ԱՄ-2018/58 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/58 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

3. Ընթացակարգի հրավերի թիվ 7 հավելվածին՝ պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրի թիվ 3-րդ չափաբաժնի մասով սահմանվել է հետևյալը.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ	անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը

	դասակարգման (CPV)		
3	33691160/3	Ախտահանիչ խտանյութ՝ նախատեսված բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանման, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար	Բաղադրությունը- ՉԱՄ, Գուանիդինի ածանցյալներ (Գուանիդինի- ի ածանցյալներ՝ ոչ ավելի, քան 1%), ավել ֆերմենտային կոմպլեքս՝ ոչ պակաս քան 3 էնզիմի պարունակությամբ (լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա), մակերևույթային ակտիվ նյութեր՝ ՄԱՆ-եր, ինչպես նաև գործառնական բաղադրիչներ և այլ հավելյալ նյութեր.: Ներկայացվող ապրանքը պետք է պարունակի նաև կոռոզիայի ինհիբիտորներ (կազմի մեջ կոռոզիոն ինհիբիտորի առկայությունը պետք է հաստատվի օգտագործման հրահանգով): Առաջարկվող ախտահանիչ նյութը իր բաղադրությունում չպետք է պարունակի որպես ակտիվ բաղադրիչներ քլոր, ալկոհոլ: Փաթեթավորումը- 1լիտր կամ այլ ծավալի պոլիէթիլենային տարա համապատասխան չափիչ բաժակով: 1լիտր խտանյութից պատրաստվի մինչև 0,5%-անոց, ոչ պակաս, քան 200 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ՝ գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), հակավիրուսային (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), A գրիպի H5N1, H1N1տեսակները) և հակասնկային (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) ազդեցությունը մինչև 15 րոպեում (ինչը հաստատված լինի << Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով): Աշխատանքային լուծույթի պատրաստման համար պահանջվող ջերմաստիճանը պետք է լինի՝ ոչ պակաս քան 15C-ից մինչև ոչ ավել քան 25C-ը: Աշխատանքային լուծույթի պիտանելիությունը լինի 5 օր-ից ոչ պակաս, նախատեսված բազմակի օգտագործման համար: Մատակարարման պահին խտանյութի ժամկետի 1/2-ի առկայություն Ախտահանիչ նյութի pH - 5,0 -8,0: Վերջնական օգտագործման համար ստացվող ախտահանիչ նյութի աշխատանքային լուծույթի արժեքը ստանալու համար, հաշվարկները կատարվելու են համաձայն << Առողջապահության նախարարության կողմից հաստատված համապատասխան մեթոդական հրահանգների և << -ում գործող սանիտարական նորմերի՝ հիմք ընդունելով հակաբակտերիալ (ներառյալ տուբերկուլյոզը), հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները: Վտանգավորության աստիճանը- 4-րդ, 5-րդ դաս: Ունենա որակի հավաստագիր, << ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ:

4. «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի 6.1 հավելվածը՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, թիվ 3-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է հետևյալ տեսքով՝

չափաբաժնի համարը	առաջարկվող ապրանքի				
	անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	ծագման երկիրը	Տեխնիկական բնութագրերը
3	«Մեգաբակ խտանյութ, 1լ»	«Մեգաբակ խտանյութ, 1լ»	Ինտերոս են Պյուս	ՌԴ	«Մեգաբակ խտանյութ, 1լ»: Խտանյութի պահպանման ժամկետը 5 տարի է: 1լ խտանյութից ստացվում է 0.5%-անոց 200 լիտր աշխատանքային պատրաստի լուծույթ, որը պիտանի է 41 օր, նախատեսված է բազմակի օգտագործման համար: Ախտահանիչ միջոցը օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ, (այդ թվում՝ տուբերկլյոզի հարուցիչների թեստավորված Միկրոբակտերիում տեռռայի նկատմամբ), ներհիվանդանոցային և և անաէրոբ վարակների, Կանդիդա և Տրիխոֆիտոն տեսակի սնկերի, բորբոսասնկերի (թեստավորված Ասպերգիլուս նիգերի համար), վիրուսների, հատուկ վտանգավոր վարակների հարուցիչների (ժանտախտ, խոլերա, տուլամերիա), միջոցն օժտված է հատկություններով մակաբուծային հիվանդությունների հարուցիչների (նախակենդանիների ցիստեր և օոցիստեր, որդերի ձվեր և թրթուրներ) նկատմամբ: Ախտահանիչ միջոցը նախատեսված է բոլոր տեսակի մակերեսների և սարքավորումների ախտահանման համար, բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների նախամանրէազերծումային մաքրման, ինչպես նաև կանխարգելիչ, ընթացիկ և եզրափակիչ ախտահանման համար՝ երեքը մեկու միաժամանակ: Ոչնչացնում է ճարպի, յուղի, մրի, սպիտակուցային նստվածքների և շատ այլ դժվար հեռացվող նյութերի բծերը և նստվածքները: Ունի ԵԱՏՄ սերտիֆիկատ և ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ՝ առ 10 հունիսի 2016թ., թիվ 1794-Ա:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրվել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհր Անանյանս, ուսումնասիրելով «Արմենֆարմ» ՍՊԸ-ի 23.04.2018թ. բողոքը, ԳԲԽ-ԱՄ-2018/58 բողոքով տեղի ունեցած նիստի ժամանակ բողոքով երրորդ կողմ ներգրավված «Խաչպար» ՍՊԸ-ի դիրքորոշումը, ինչպես նաև «Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցչի դիրքորոշումը, «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, գտնում եմ, որ «Արմենֆարմ» ՍՊԸ-ի 23.04.2018թ. բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-5-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) ***հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին***, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. ***Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին

անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից « Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հրավերով գնման առարկա ախտահանիչ խտանյութի համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը (նկարագիրը).

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը

3	33691160/3	Ախտահանիչ խտանյութ՝ նախատեսված բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանման, նախամանրէազերծումայ ին և էնզիմատիկ մաքրման համար	Բաղադրությունը- ՉԱՄ, Գուանիդինի ածանցյալներ (Գուանիդինի-ի ածանցյալներ՝ ոչ ավելի, քան 1%), ավել ֆերմենտային կոմպլեքս՝ ոչ պակաս քան 3 էնզիմի պարունակությամբ (լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա), մակերևույթային ակտիվ նյութեր՝ ՄԱՆ-եր, ինչպես նաև գործառնական բաղադրիչներ և այլ հավելյալ նյութեր,: Ներկայացվող ապրանքը պետք է պարունակի նաև կոռոզիայի ինհիբիտորներ (կազմի մեջ կոռոզիոն ինհիբիտորի առկայությունը պետք է հաստատվի օգտագործման հրահանգով): Առաջարկվող ախտահանիչ նյութը իր բաղադրությունում չպետք է պարունակի որպես ակտիվ բաղադրիչներ քլոր, ալկոհոլ: Փաթեթավորումը- 1լիտր կամ այլ ծավալի պոլիէթիլենային տարա համապատասխան չափիչ բաժակով: 1լիտր խտանյութից պատրաստվի մինչև 0,5%-անոց, ոչ պակաս, քան 200 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ 'գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), հակավիրուսային (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), A գրիպի H5N1, H1N1տեսակները) և հակասնկային (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) ազդեցությունը մինչև 15 րոպեում (ինչը հաստատված լինի << Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով): Աշխատանքային լուծույթի պատրաստման համար պահանջվող ջերմաստիճանը պետք է լինի՝ ոչ պակաս քան 15C-ից մինչև ոչ ավել քան 25C-ը: Աշխատանքային լուծույթի պիտանելիությունը լինի 5 օր-ից ոչ պակաս, նախատեսված բազմակի օգտագործման համար: Մատակարարման պահին խտանյութի ժամկետի 1/2-ի առկայություն Ախտահանիչ նյութի pH - 5,0 -8,0: Վերջնական օգտագործման համար ստացվող ախտահանիչ նյութի աշխատանքային լուծույթի արժեքը ստանալու համար, հաշվարկները կատարվելու են համաձայն << Առողջապահության նախարարության կողմից հաստատված համապատասխան մեթոդական հրահանգների և <<-ում գործող սանիտարական նորմերի՝ հիմք ընդունելով հակաբակտերիալ (ներառյալ տուբերկուլյոզը), հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները: Վտանգավորության աստիճանը- 4-րդ, 5-րդ դաս: Ունենա որակի հավատագիր, << ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ:

Ընթացակարգի թիվ 3-րդ չափաբաժնի մասով մասնակցության հայտ ներկայացրած «Խաչպար» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերի համապատասխան

չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ ***մասնակիցը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով*** և ժամկետներում ***ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր)***:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետով սահմանվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի թիվ 3-րդ չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ինչպես նաև հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

«Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի 6.1 հավելվածը՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, թիվ 3-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է հետևյալ տեսքով.

չափաբաժնի համարը	առաջարկվող ապրանքի				
	անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	ծագման երկիրը	Տեխնիկական բնութագրերը

3	«Մեգաբակ խտանյութ, 1լ»	«Մեգաբակ խտանյութ, 1լ»	Ինտերսեն Պլյուս	ՌԴ	«Մեգաբակ խտանյութ, 1լ»: Խտանյութի պահպանման ժամկետը 5 տարի է: 1լ խտանյութից ստացվում է 0.5%-անոց 200 լիտր աշխատանքային պատրաստի լուծույթ, որը պիտանի է 41 օր, նախատեսված է բազմակի օգտագործման համար: Ախտահանիչ միջոցը օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ, (այդ թվում՝ տուբերկլյոզի հարուցիչների թեստավորված Միկրոբակտերիում տեռռայի նկատմամբ), ներհիվանդանոցային և և անաէրոբ վարակների, Կանդիդա և Տրիխոֆիտոն տեսակի սնկերի, բորբոսասնկերի (թեստավորված Ասպերգիլուս նիգերի համար), վիրուսների, հատուկ վտանգավոր վարակների հարուցիչների (ժանտախտ, խոլերա, տուլամերիա), միջոցն օժտված է հատկություններով մակաբուծային հիվանդությունների հարուցիչների (նախակենդանիների ցիստեր և օոցիստեր, որդերի ձվեր և թրթուրներ) նկատմամբ: Ախտահանիչ միջոցը նախատեսված է բոլոր տեսակի մակերեսների և սարքավորումների ախտահանման համար, բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների նախամանրէազերծումային մաքրման, ինչպես նաև կանխարգելիչ, ընթացիկ և եզրափակիչ ախտահանման համար՝ երեքը մեկու միաժամանակ: Ոչնչացնում է ճարպի, յուղի, մրի, սպիտակուցային նստվածքների և շատ այլ դժվար հեռացվող նյութերի բծերը և նստվածքները: Ունի ԵԱՏՄ սերտիֆիկատ և ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ՝ առ 10 հունիսի 2016թ., թիվ 1794-Ա:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրվել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Այսպիսով, արձանագրում եմ, որ «Արմենֆարմ» ՍՊԸ-ն ԳԲԽ-ԱՄ-2018/58 բողոքով տեղի ունեցած նիստի ժամանակ հայտնել է, որ «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի թիվ 3-րդ չափաբաժնի մասով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրի և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից թիվ 3-րդ չափաբաժնի մասով

առաջարկված՝ «Մեգաբակ խտանյութ, 1լ» ապրանքի տեխնիկական բնութագրի միջև առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

	«ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիր	**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՄԱՆ** **«10» հունիս 2016թ. No 1794 – Ա** **«ՄԵԳԱԲԱԿ» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ** **ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ**	
	Բաղադրությունը	Որպես ազդող նյութ, միջոցը պարունակում է	
1.	ՉԱՄ	(ՉԱՄ)-Չորորդային ամոնիումի միացություններ-դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ (7,5±0,5%),	Համապատասխանում է
2.	-	**<u>Երրորդային ամին</u>** - Ն,Ն-բիս (3-ամինոպրոպիլ) դոդեցիլամին (5,0±0,5%),	**Չի համապատասխանում**
3.	Գուանիդինի ածանցյալներ (Գուանիդինի ածանցյալներ՝ **<u>ոչ ավելի, քան 1%)</u>**	պոլիհեքսամեթիլենբիգուանիդ հիդրոքլորիդ **<u>(2,5±0,5%),</u>**	**Չի համապատասխանում**
4.	**<u>Ֆերմենտային կոմպլեքս՝ ոչ պակաս քան 3 էնզիմի պարունակությամբ (լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա),</u>**	-	**Չի համապատասխանում**
5.	**<u>1լիտր</u>** խտանյութից պատրաստվի **<u>մինչև 0,5%-անոց,</u>** **<u>ոչ պակաս , քան 200 լիտր</u>** աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ ՝գրամդրական և գրամբացասական	**ՀՀ Մեթոդական հրահանգ Աղյուսակ 18** **<u>1լիտր</u>** խտանյութից պատրաստվում է **<u>3%-անոց,</u>** **<u>33,33 լիտր</u>** աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ ՝գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի	**Չի համապատասխանում**

	մանրէների (ներառյալ՝ տուբերկուլոզի միկոբակտերիաները), հակավիրուսային (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), A գրիպի H5N1, H1N1տեսակները) և հակասնկային (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) , **<u>ազդեցությունը մինչև 15 րոպեում</u>** (ինչը հաստատված լինի << Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով):	միկոբակտերիաները), հակավիրուսային (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), A գրիպի H5N1, H1N1տեսակները) և հակասնկային (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) **<u>ազդեցությունը 60 րոպեում</u>** (համաձայն << Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգի):	
6.	**<u>Ախտահանիչ նյութի pH - 5,0 -8,0:</u>**	**<u>Ph ը՝ 10,5±1,5 միավոր:</u>**	**Չի համապատասխանում**
7.	Աշխատանքային լուծույթի պատրաստման համար պահանջվող ջերմաստիճանը պետք է լինի՝ **<u>ոչ պակաս քան 15C-ից մինչև ոչ ավել քան 25C-ը:</u>**	**Աղյուսակ 18** **Ախտահանիչ միջոցի լուծույթով բժշկական նշանակության իրերի ախտահանման ռեժիմներ տուբերկուլոզի ժամանակ** **<u>Աշխատանքային լուծույթի նախնական ջերմաստիճանը (42±2)</u>** ախտահանման պահաժամի ընթացքում չի ապահովվում:	**Չի համապատասխանում**

Միաժամանակ արձանագրում եմ, որ «Խաչպար» ՍՊԸ-ն ԳԲԽ-ԱՄ-2018/58 բողոքով տեղի ունեցած նիստի ժամանակ ընդունել է այն փաստը, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված ախտահանիչ խտանյութի որոշ պարամետրեր, թվեր, տոկոսներ տարբերվում են հրավերի տեխնիկական բնութագրից:

«Խաչպար» ՍՊԸ-ն հայտնել է, որ պատճառն այն է, որ «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի թիվ 3-րդ չափաբաժնի մասով

նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիրը կազմված է եղել սահմանափակումներով, ավելացնելով, որ ախտահանիչ խտանյութը բնութագրող որոշ հատկանիշներ տարբերվում են այլ արտադրողների համարժեք ախտահանիչ խտանյութի կազմի մեջ մտնող հատկանիշներից, ինչը չհիմնավորված խոչընդոտներ է առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում նաև՝ «Խաչպար» ՍՊԸ-ի համար, հավասար պայմաններ չի ապահովում հնարավոր մասնակիցների համար՝ սահմանափակելով հնարավոր մասնակիցների մասնակցությունը:

Միաժամանակ արձանագրում եմ, որ «Խաչպար» ՍՊԸ-ն, պնդելով, որ տեխնիկական բնութագիրը կազմված է եղել սահմանափակումներով, այնուամենայնիվ Ընկերությունը մասնակցել է Ընթացակարգին:

Այս տեսանկյունից անհրաժեշտ եմ համարում նշել, որ «Գնումների մասի» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը հստակ սահմանում է, որ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ գնման առարկայի բնութագրերը, նախարակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը: Մինչդեռ «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման նիստն արդեն իսկ տեղի է ունեցել, ուստի Ընկերության կողմից այլևս չեն կարող վիճարկվել Ընթացակարգի հրավերի պահանջները:

Դրա հետ մեկտեղ, արձանագրում եմ նաև, որ Ընթացակարգի թիվ 3-րդ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագիրը որևէ պահանջ կամ հղում չի պարունակում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Այսպիսով, վերոգրյալով պայմանավորված, գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, Ընթացակարգի թիվ 3-րդ չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ի

հայտը գնահատելով հրավերի պահանջներին համապատասխան, գործել է ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Արմենֆարմ» ՍՊԸ-ի կողմից 23.04.2018թ. ներկայացված բողոքը բավարարել, մասնավորապես՝ պարտավորեցնել «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնելու 10.04.2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 5-րդ կետով՝ «Խաչպար» ՍՊԸ-ին ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը.

2. դադարեցնելու 17.04.2018թ. թիվ 2 որոշմամբ ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը.

3. դադարեցնելու 17.04.2018թ. կայացած և www.gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ 3-րդ չափաբաժնի մասով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ